ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՆՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԵՐԵՎԱՆԻ H=308Մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՄԲ ՀԵՌՈՒՍՏԱԱՇՏԱՐԱԿԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈԶԻՈՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՇԵՐՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՆԵՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «15» 08 2018թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Գ. Ալոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դրոթերմ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Է. Չատինյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է մինչև 15.10.2018թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 աշխատանքները կատարել, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր միջոցներով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.4 պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.5 պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.6 աշխատանքի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և այն կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.7 պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 /երեք/ տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.8 պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից աշխատանքի ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված աշխատանքի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է կատարված աշխատանքների համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 68 160 000 (վաթսունութ միլիոն մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից 11 360 000 (տասնմեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին, հանձնման-ընդունման արձանագրության հաստատման պահից 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են եղանակային պայմանները, երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական

մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում եղանակային պայմանները թույլ չտան շարունակել աշխատանքները, և առաջանա դրանց պարտադրված ժամանակավոր դադար որևէ ժամկետով, ապա այն համարվելու է ֆորս-մաժորային՝ սույն պայմանագրի 7-րդ կետի համաձայն և պայմանագրի գործողության ժամկետը կողմերի փոխհամաձայնությամբ կարող է երկարաձգվել պարտադրված ժամանակավոր դադարի ժամկետով՝ չհաշված օրենքով նախատեսված՝ երկարաձգման ժամկետը:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ունենալու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորություններր չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերր միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվր: Կապալառուն, պայմանագիրր միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերր լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերր լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածներր, համարվում են պայմանագրի անբաժանելի մասր:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքր:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	«ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ
«Ամերիաբանկ» ՓԲԸ	Հասցեն՝ ք. Երևան, Նուբարաշեն 15փ., 11/3
հ/հ 1570027609970100	հ/հ 1930059227890100
ՀՎՀՀ 01501898	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
	ՀՎՀՀ 02253748
	Տնօրեն՝ Է. Չատինյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«15» 08 2018թ. կնքված
ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«ՀՀՌՑ» ՓԲ ընկերության Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների կատարման

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնի-կական բնութա-գիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանա-կը	կատարման	
							հասցեն	Ժամկետը
«ՀՀՌՑ» ՓԲԸ Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքներ	45441160/1	Բերված է ստորև	դրամ	1	68 160 000	1	ՀՀ, ք. Երևան,Նորք, Հովսեփյան 95 ՀՀՌՑ ՓԲԸ տարածք	15.10.2018

Ընդհանուր դրույթներ

1.1 Հիմքը — «Украинский институт стальных конструкций имени В.Н. Шимановского» ընկերության կողմից տրված՝ Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի կրող մետաղական կոնստրուկցիաների զննման եզրակացությունը

1.2 Ֆինանսավորման աղբյուրը — «ՀՀՌՑ» ՓԲԸ միջոցներ

2. Տեխնիկական բնութագիրը

2.1 Կատարել «ՀՀՌՑ» ՓԲԸ Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքներ (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն Հավելված 1.1-ում նշված ծավալների:

2.2 Մինչ Աշխատանքը սկսելը անհրաժեշտ է նախապես իրականացնել Երևանի հեռուստաաշտարակի շրջակա տարածքի, հեռուստաաշտարակի տեխնիկական սրահների պատուհանների ապակիների և շրջանակների և հեռուստաաշտարակի գեղազարդ լուսավորման համակարգի պաշտպանության համապատասխան միջոցառումներ, որոնք կպաշտպանեն ներկի հարվածներից: Անհրաժեշտության դեպքում Կապալառուն պետք է կատարի նշված հատվածների մաքրում ներկի մնացորդներից: Աշխատանքների իրականացման ընթացքում բացառել գործող անտենային համակարգերի ներկոտվելը:

2.3 Աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ նյութերը, այդ թվում.

- նախաներկ՝ ԳՓ-021, ըստ ГОСТ 25129-82, կամ համարժեքը;
- ներկ՝ ՊՓ 115, ըստ ГОСТ 6465-76, կամ համարժեքը՝ կարմիր և սպիտակ: Ներկի երանգը նախապես անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Ներկը պետք է լինի միևնույն խմբաքանակի արտադրության: Ներկի արտադրման և պահպանման ժամկետը, ինչպես նաև տեղափոխման պայմանները պետք է համապատասխանեն ГОСТ 6465-76 պահանջներին: Նախաներկի և ներկի համար Պատվիրատուին պետք է ներկայացվեն ГОСТ-երին վերջիններիս համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը /սերտիֆիկատ/: Բացի այդ, Պատվիրատուի պահանջով նախաներկը և ներկը կարող են ենթարկվել լրացուցիչ լաբորատոր հետազոտությունների;
- ուայթ սպիրիտ (լուծիչ):

Աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ այլ նյութեր, տեխնիկական միջոցներ, գործիքներ և պարագաներ,ձեռք են բերվում կամ ապահովվում են Կապալառուի կողմից

2.4 Ներկման աշխատանքները կատարել համաձայն СНиП 2.03.11-85 "Защита строительных конструкций от коррозии" հետևյալ տեխնոլոգիական հերթականությամբ.
2.4.1 Ժանգի մաքրում մետաղական խոզանակներով, քերիչներով կամ մեխանիկական եղանակով: Ներկվող մակերևույթի մաքրության աստիճանը հասցնել 3-ի՝ ըստ ГОСТ 9.402-2004:
2.4.2 Ներկվող մակերևույթների փոշեզերծում:
2.4.3 Ներկվող մակերևույթների յուղայնազերծում ուայթ սպիրիտով:
2.4.4 Վնասված մակերեսների մածիկացում:
2.4.5 Նախաներկում ГФ-021 (ГОСТ 25129-82) մակնիշի նախաներկով, 1 շերտ, շերտի հաստությունը 20-25 մկմ:
2.4.6 Ներկում ПФ 115 (ГОСТ 6465-76) էմալով, 2 շերտ:
2.4.7 Ներկի շերտի ընդհանուր հաստությունը պետք է լինի ոչ պակաս 80 մկմ-ից:
2.4.8 Ներկի շերտը պետք է լինի համասեռ՝ առանց հոսահետքերի և փչուկների:
2.5. Ներկման աշխատանքներն իրականացնել բարձր ճնշման ագրեգատների միջոցով: Ընդ որում, խտացված օդը պետք է զերծվի փոշուց և խոնավությունից:
2.6. Կոնստրուկցիաները ներկել իրար հաջորդող սպիտակ և կարմիր գույներով՝ ըստ գոյություն ունեցող հերթականության:
2.7. Ներկման աշխատանքները անհրաժեշտ է կատարել չոր մակերևույթների վրա, օդի ջերմաստիճանը 15^0 C-ից ոչ պակաս, հարաբերական խոնավությունը մինչև 80%, քամու արագությունը՝ մինչև 10 մ/վրկ պայմաններում:
2.8. Աշխատանքները կատարվելու են գործող ալեհավաքների և ալեցիրների հարևանությամբ, գերբարձր հաճախականային ճառագայթման ազդեցության պայմաններում, որից պաշտպանվելու համար անհրաժեշտ է օգտագործել հատուկ արտահագուստ և միջոցներ:
2.9. Գործող անտենաների անմիջական հարևանությամբ կատարվող աշխատանքները , որոնց իրականացումը կպահանջի հեռարձակման տեխնիկական միջոցների անջատում, պետք է կատարվեն Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված ժամանակացույցով:
2.10. Աշխատանքներ իրականացնողները պետք է ունենան <<Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն>> համապատասխան վկայական և առողջական վիճակի վերաբերյալ **տեղեկանքի բնօրինակը**, ինչը պետք է ներկայացվի որակավորման փուլում:
2.11. Աշխատանքներ կատարողները խստորեն պետք է պահպանեն բարձրության վրա աշխատանքների իրականացման անվտանգության կանոնները: Կապալառուն ինքն է կրում պատասխանատվություն իր աշխատակիցների կողմից անվտանգության և հակահրդեհային կանոնների պահպանման, ինչպես նաև, բարձրության վրա աշխատանքների իրականացման համապատասխան անվտանգության պարագաների անսարքությունների և վնասվածքների համար:

3. Աշխատանքների ընդունման կարգը

3.1. Կատարված աշխատանքների ընդունումը համաձայն՝ տեխնիկական վերահսկողության եզրակացության, СНиП III-4-80 ч. III "Правила производства и приемки работ" և СНиП 3.04.03-85* "Защита строительных конструкций и сооружений от коррозии":
3.2 Աշխատանքների արդյունքները ձևակերպվում են հանձնման-ընդունման ակտով:

4. Երաշխիք

4.1. Ներկի շերտի պահպանման երաշխիքային ժամկետ է սահմանվում 3 (երեք) տարի՝ Աշխատանքի հանձնման-ընդունման պահից:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	«ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ
«Ամերիաբանկ» ՓԲԸ	Հասցեն՝ ք. Երևան, Նուբարաշեն 15փ., 11/3
հ/հ 1570027609970100	հ/հ 1930059227890100
ՀՎՀՀ 01501898	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
	ՀՎՀՀ 02253748
	Տնօրեն՝ Է. Չատինյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ինդեքսավորումը\ աշխատավարձի K1= 1979,83
մեք. և սարք.շահագործում K2= 2774,45
նյութերի 1.02*1.05* 1,0572

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ.դր./	Այն թվում										Ընդհանուր արժեքը	Նյութերի արժեքը	Նյութերի արժեքը
						Աշխատավարձը		Մեքենա-մեխ. շահագործումը		Նյութերի ծախսը և արժեքը 1 միավորի համար								
						ըստ նորմերի	գործող գներով		ըստ նորմերի	գործող գներով	անվանումը	չափման միավորը	քանակը	արժեքը	ընդհանուր արժեքը	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5	6	7	8		9	10	11	12	13	14	15	16	17	18
		Նիշ 0.00-131.0մ																
1	13-263	Մետաղական կոնստրուկցիաների մաքրում ժանգից մետաղական խոզանակով	ք.մ	1250,0	0,317	0,160	0,317		0,00	0,00	-	-	0,00	0,00	0,00	395,966	0,00	0,00
2	13-265	Մաքրած տեղերի փոշեզերծում	ք.մ	1250,0	0,147	0,060	0,119		0,01	0,028	-	-	0,00	0,00	0,00	183,168	0,00	0,00
3	13-270	Մաքրած մակերեսի յուղազերծում	100 ք.մ	12,500	36,603	2,40	4,752		3,400	9,433	լուծիչ	կգ	33,0	0,6	19,800	457,544	19,800	22,419
4	13-126	Վնասված մակերևույթների մածիկացում	100 ք.մ	0,800	23,251	1,630	3,227		0,300	0,832	մածիկ ЭП-0010	կգ	11,3	1,5	16,950	18,601	16,950	19,192
5	13-121 K=2	Մետաղական կոնստրուկցիաների նախաներկում	100 ք.մ	12,500	26,845	4,100	8,117		0,400	1,110	նախաներկ ГФ-021	կգ	17,2	0,8	13,760	335,563	15,560	17,618
											լուծիչ	կգ	3,0	0,6	1,800			
6	34-191 K=0.66	Պրոֆիլային մետաղական կոնստրուկցիաների ներկում (2 շերտ էմալ)	տն	475,00	52,279	12,606	24,958		6,798	18,861	էմալ ПФ-115	կգ	9,34	0,8	7,472	24832,384	7,472	8,460
7	34-190 K=0.66	Խողովակային մետաղական կոնստրուկցիաների ներկում (2 շերտ էմալ)	տն	608,0	35,505	8,976	17,771		4,851	13,459	էմալ ПФ-115	կգ	4,72	0,8	3,776	21587,179	3,776	4,275
8	13-153 K=2	Աշտարակի ուղղահայաց փողի մակերևույթի ներկում (2 շերտ էմալ)	100 ք.մ	16,50	22,497	3,020	5,979		0,240	0,666	էմալ ПФ-115	կգ	16,0	0,8	12,800	371,194	14,000	15,852
											լուծիչ	կգ	2,0	0,6	1,200			
9	13-153 K=2	71մ նիշի տեխնիկական շենքի կարկասի տակի էլեմենտների ներկում (2 շերտ էմալ)	100 ք.մ	3,800	22,497	3,020	5,979		0,240	0,666	էմալ ПФ-115	կգ	16,0	0,8	12,800	85,487	14,000	15,852
											լուծիչ	կգ	2,0	0,6	1,200			
		Ընդամենը՝ Նիշ 131-173մ														48267,087		
10	13-263	Մետաղական կոնստրուկցիաների մաքրում ժանգից մետաղական խոզանակով	ք.մ	370,00	0,317	0,160	0,317		0,0	0,0	-	-	0,00	0,00	0,00	117,21	0,00	0,00
11	13-265	Մաքրած տեղերի փոշեզերծում	ք.մ	370,00	0,147	0,060	0,119		0,010	0,028	-	-	0,00	0,00	0,00	54,218	0,00	0,00
12	13-270	Մաքրած մակերեսի յուղազերծում	100 ք.մ	3,700	36,603	2,400	4,752		3,400	9,433	լուծիչ	կգ	33,0	0,6	19,8	135,433	19,800	22,419
13	13-126	Վնասված մակերևույթների մածիկացում	100 ք.մ	0,400	23,251	1,630	3,227		0,300	0,832	մածիկ ЭП-0010	կգ	11,3	1,5	17,0	9,301	16,950	19,192
14	13-121 K=2	Մետաղական կոնստրուկցիաների նախաներկում	100 ք.մ	3,700	26,845	4,100	8,117		0,400	1,110	նախաներկ ГФ-021	կգ	17,2	0,8	13,8	99,327	15,560	17,618
											լուծիչ	կգ	3,0	0,6	1,8			
15	34-191 K=0.66	Պրոֆիլային մետաղական կոնստրուկցիաների ներկում (2 շերտ էմալ)	տն	47,000	52,279	12,606	24,958		6,798	18,861	էմալ ПФ-115	կգ	9,34	0,8	7,47	2457,099	7,472	8,460

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
16	34-190 K=0.66	Խողովակային մետաղական կոնստրուկցիաների ներկում (2 շերտ էմալ)	տն	101,300	35,505	8,976	17,771	4,851	13,459	էմալ ՊՓ-115	կգ	4,72	0,8	3,78	3596,680	3,776	4,275
17	13-153 K=2	Աշտարակի ուղղահայաց փողի մակերևույթի ներկում (2 շերտ էմալ)	100 ք.մ	5,200	22,497	3,020	5,979	0,240	0,666	էմալ ՊՓ-115	կգ	16,0	0,8	12,80	116,982	14,000	15,852
										լուծիչ	կգ	2,0	0,6	1,20			
18	13-263	130մ նիշում տեխնիկական շենքի տանիկի և արտաքին մակերեսի մաքրում ժանգից	ք.մ	30,000	0,317	0,160	0,317	0,00	0,00	-	-	0,0	0,0	0,0	9,503	0,00	0,00
19	13-265	130մ նիշր տեխն. շենքի մաքրած մակերեսի փոշեզերծում	ք.մ	30,000	0,147	0,060	0,119	0,01	0,028	-	-	0,0	0,0	0,0	4,396	0,00	0,00
20	13-270	Նույն մակերեսի յուղազերծում	100 ք.մ	0,300	36,603	2,400	4,752	3,400	9,433	լուծիչ	կգ	33,0	0,6	19,80	10,981	19,800	22,419
21	13-153 K=2	130մ նիշում տեխնիկական շենքի տանիքի և արտաքին մակերեսի ներկում (2 շերտ էմալ)	100 ք.մ	6,700	22,497	3,020	5,979	0,240	0,666	էմալ ՊՓ-115	կգ	16,0	0,8	12,80	150,727	14,000	15,852
										լուծիչ	կգ	2,0	0,6	1,20			
		Ընդամենը՝ Նիշ 173-308մ													6761,853		
22	13-263	Մետաղական կոնստրուկցիաների մաքրում ժանգից մետաղական խոզանակով	ք.մ	116,0	0,317	0,160	0,317	0,0	0,0	-	-	0,0	0,0	0,0	36,7	0,00	0,00
23	13-265	Մաքրած տեղերի փոշեզերծում	ք.մ	116,0	0,147	0,060	0,119	0,010	0,028	-	-	0,0	0,0	0,00	16,998	0,00	0,00
24	13-270	Մաքրած մակերեսի յուղազերծում և լվացում	100 ք.մ	1,160	36,60349	2,400	4,752	3,400	9,433	լուծիչ	կգ	33,0	0,6	19,80	42,460	19,800	22,419
25	13-126	Վնասված մակերևույթների մածիկացում	100 ք.մ	0,400	23,25129	1,630	3,227	0,300	0,832	մածիկ ՅՊ-0010	կգ	11,3	1,5	16,95	9,301	16,950	19,192
26	13-121 K=2	Մետաղական կոնստրուկցիաների նախաներկում	100 ք.մ	1,160	26,84507	4,100	8,117	0,400	1,110	նախաներկ ГФ-021	կգ	17,2	0,8	13,76	31,140	15,560	17,618
										լուծիչ	կգ	3,0	0,6	1,80			
27	34-191 K=0.66	Պրոֆիլային մետաղական կոնստրուկցիաների ներկում (2 շերտ էմալ)	տն	14,800	52,2787	12,606	24,958	6,798	18,861	էմալ ՊՓ-115	կգ	9,34	0,8	7,47	773,725	7,472	8,460
28	13-153 K=2	Աշտարակի ուղղահայաց փողի մակերևույթի ներկում (2 շերտ էմալ)	100 ք.մ	9,800	22,49661	3,020	5,979	0,240	0,666	էմալ ՊՓ-115	կգ	16,0	0,8	12,80	220,467	14,000	15,852
										լուծիչ	կգ	2,0	0,6	1,20			

Ընդամենը՝	1130,836
Ընդամենը՝ նիշ 0.00-308.0մ /հազ.դր./	56159,775
Վերադիր ծախսեր 13.3%	7469,250
Ընդամենը /հազ.դր./	63629,026
Շահույթ 10%	6362,903
Ընդամենը /հազ.դր./	69991,928
ԱԱՀ 20%	13998,386
Ընդհանուրը՝/հազ.դր./	**83990,314**

Վճարումները կկատարվեն կատարողական ակտերի հիման վրա՝ սույն պայմանագրի 5.4 կետով սահմանված հաշվարկային բանաձևով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հասցեն՝ ք. Երևան, Նուբարաշեն 15փ., 11/3
հ/հ 1930059227890100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02253748

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
15 սեպտեմբեր 2018 թ. կնքված
ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ՀՀՌՑ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ Հ=308Մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՄԲ ՀԵՌՈՒՍՏԱԱՇՏԱՐԱԿԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈԶԻՈՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՇԵՐՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ և ՆԵՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևանի հ=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների կատարում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.10.2018թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Նուբարաշեն 15փ., 11/3
հ/հ 1930059227890100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02253748
Տնօրեն՝ Է. Չատինյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
15 Սեպտեմբեր 2018 թ. կնքված
ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ներկայացվող գումարների վճարները իրականացվում են սույն պայմանագրի 5-րդ կետով սահմանված կարգով:							
1	45441160/1	«ՀՀՌՑ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ Հ=308Մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՄԲ ՀԵՌՈՒՍՏԱԱՇՏԱՐԱԿԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈԶԻՈՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՇԵՐՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ և ՆԵՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			-	-	68 160 000	68 160 000	68 160 000	68 160 000	68 160 000	**68 160 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՊՐՈԹԵՐՄ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Նուբարաշեն 15փ., 11/3
հ/հ 1930059227890100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02253748
Տնօրեն՝ Է. Չատինյան

/ստորագրություն/
Կ.Տ